<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱԶԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ Արարտի մարզ գ.Լանջազատ Մաշտոցի 10/1
Էլ. փոստ՝ lanjazat100@mail.ru

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արարատի մարզի Լանջազատի միջնակարգ դպրոց» ՊԱԿ-ի դասվարի (14 դասաժամ), տեխնոլոգիայի (14,տղաների և աղջիկների խմբեր), կերպարվեստի (7) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ՀԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:
3. Անձնագրի պատճենը:
4. Ինքնակենսագրություն (Ձև 4):
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի:
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00- ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 27-ին՝ ժամը 12:00-ին, Արարատի մարզի Լանջազատի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ.Լանջազատ Մաշտոցի 10/1:

Տնօրեն՝ Ա.Մախմուրյան